ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 943-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքը Լիպարիտ Սերոժի Ուլումյանի կողմից Ճամբարակ համայնքի բյուջեի նկատմամբ չկատարված հարկային պարտավորությունների վերաբերյալ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Լիպարիտ Սերոժի Ուլումյանին /հաշվառված՝ Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, Սեպտեմբերի 21 փողոց, 2 շենք, 25 բնակարան հասցեում/ սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի 05-002-0223-0199 կադաստրային ծածկագրով 1.2265 հա անջրդի վարելահողը, 05-002-0222-0004 կադաստրային ծածկագրով 0.3974 հա անջրդի վարելահողը, 05-002-0223-0340 կադաստրային ծածկագրով 0.1443 հա անջրդի վարելահողը, 05-002-0208-0022 կադաստրային ծածկագրով 0.1082 հա անջրդի վարելահողը, 05-002-0206-0001 կադաստրային ծածկագրով 0.3174 հա անջրդի վարելահողը, 05-002-0209-0005 կադաստրային ծածկագրով 0.1119 հա անջրդի վարելահողը, 05-002-0223-0365 կադաստրային ծածկագրով 0.491 հա խոտհարքը, 05-002-0223-0025 կադաստրային ծածկագրով 0.8805 հա խոտհարքը ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով անշարժ գույքի ընդամենը՝ 47693 ՀՀ դրամի չափով հարկ վճարելու պարտականությունը չկատարելու փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում 2025 թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը 12:15-ին, ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում:
2. Հարուցված վարչական վարույթի մասին եռօրյա ժամկետում ծանուցել Լիպարիտ Ուլումյանին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 01
ք. Ճամբարակ